



Հետաքրքրության հայտ (EOI) ներկայացնելու հրավեր

Ամսաթիվ՝ 3 հոկտեմբեր 2014թ.

Վարկի համար՝ 2993 – ARM, Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր, Տրանշ 3, Թալին-Լանջիկ և Լանջիկ-Գյումրի ճանապարհային հատվածներ

Պայմանագրի համարը և անունը՝ Պայմանագիր T3-CS-EM (Արտաքին Վերահսկող Գործակալություն)

Հայտի ներկայացման վերջնաժամկետ՝ 04 նոյեմբերի 2014թ.

Հայաստանի Հանրապետությունը վարկ է ստացել Ասիական զարգացման բանկի (ԱԶԲ) հատուկ ֆոնդի միջոցներից՝ Հյուսիս-Հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման համար, և մտադիր է գումարի մի մասը հատկացնել T3-CS-EM պայմանագրով նախատեսված համապատասխան վճարումները կատարելու համար:

Պայմանագրի պայմանները և ԱԶԲ-ի կողմից վճարումները կկատարվեն Վարկային համաձայնագրի պայմաններին և ԱԶԲ-ի և իր վարկառուների կողմից խորհրդատուների վարձման ուղեցույցերին համաձայն:

Բացառությամբ ԱԶԲ-ի կողմից հատուկ համաձայնության դեպքերի ոչ մի այլ երրորդ կողմ, բացի ՀՀ կառավարությունից, վարկի գումարի նկատմամբ չի կարող որևէ իրավունք ունենալ կամ պահանջ ներկայացնել:

ԱՐՏԱՔԻՆ ՎԵՐԱՀՍԿՈՂ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ (ԱՎԳ)՝

Ներկայացնող գործակալությունը կվարձի վերահսկողության և գնահատման ոլորտում մասնագիտացված ազգային խորհրդատվական ընկերություն կամ ոչ պետական կազմակերպություն ԱԶԲ-ի ուղեցույցների համաձայն: ԱՎԳ-ի գործառույթները ներառում են՝

- ա) համոզվել, որ վերաբնակեցումը իրականացվել է Հողի օտարման և վերաբնակեցման շրջանակներին և Հողի օտարման և վերաբնակեցման պլանին համապատասխան,
- բ) վերահսկել և գնահատել հողի օտարման և վերաբնակեցման գործունեության հետ կապված ժամանակացույցները և նպատակների իրականացումը,
- գ) գնահատել արդյոք ազդեցության ենթարկված անձինք և տնային տնտեսությունները ի վիճակի են եղել գոնե վերականգնելու իրենց կենսաապահովումը և կենսամակարդակը,
- դ) վերանայել խոցելի խմբերի վրա ծրագրի ազդեցությունը և գնահատել ընդունված մեղմացուցիչ միջոցների արդյունավետությունը,
- ե) գնահատել վերաբնակեցման արդյունավետությունն և ազդեցությունը, հիմնվելով ինչպես քաղաքականության, այնպես էլ փորձի վրա, ինչպես նաև, անհրաժեշտության դեպքում, առաջարկել սխալները շտկող միջոցառումներ:

ԱՎԳ-ի աշխատանքի շրջանակը կներառի նաև տեղամասերի պայմանների, փոխհատուցման և բողոքների բավարարման ընթացակարգերի և արդյունքների վերանայումը:

Ընտրության եղանակը՝ Խորհրդատուների որակավորման հիման վրա հիմնված ընտրություն (CQS)

Պայմանագրի տեսակը՝ Միանվագ վճարումներով

Գնահատված բյուջեն՝ 48,000.00 (քառասունութ հազար) ԱՄՆ դոլար առանց ԱԱՀ-ի

Մասնագիտական անձնակազմի ներգրավում՝ 25.5 մարդ ամիս

Առաջադրանքի իրականացման տևողությունը՝ 27 ամիս

Նախնական սկիզբը՝

Ապրիլ 2015թ.

Սպասվող ավարտը՝

Օգոստոս 2017թ.

Խորհրդատուների տեսակ՝

Ազգային կազմակերպություն

Հայտերի ներկայացում

Հետաքրքրվող մասնակիցները կարող են գտնել և բեռնել հետաքրքրության հայտի ձևն ու ցանկացած այլ առնչվող տեղեկատվություն (անվճար) ԱԶԲ-ի Խորհրդատուների Կառավարման Համակարգի հետևյալ ինտերնետային կայքից՝ <http://www.cms.adb.org>: Հետաքրքրության հայտի ձևը մասնակիցները կարող են ձեռք բերել նաև «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ից arustamyank@northsouth.am էլեկտրոնային հասցեին ուղարկելով պաշտոնական նամակ:

Հետաքրքրության հայտերը պետք է ներկայացվեն էլեկտրոնային եղանակով՝ <http://www.cms.adb.org> ԱԶԲ-ի Խորհրդատուների Կառավարման Համակարգի միջոցով, ոչ ուշ, քան 04 նոյեմբերի 2014թ.:

Կազմակերպության անվանումը՝ «Հյուսիս-Հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ

Հասցեն՝

ՀՀ, ք. Երևան 0002, Թումանյան փողոց, թիվ 38 շենք

Հեռախոս՝

+374-60-50-68-70 (-71,-73)

Հարցերի համար դիմել՝

Կարեն Առուստամյանին, էլեկտրոնային հասցե՝ arustamyank@northsouth.am